ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1143/02/24 ք. Երևան
20 Փետրվարի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գոհար Գրիգորյանի, ծանոթանալով «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ կողմերի միջև 12.05.2023թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-23-22/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 26.01.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ դատարան է ներկայացրել հայցադիմում ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ի միջև 12.05.2023թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-23-22/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 26.01.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Դատարանը հավելում է, որ հայցադիմումին կից ներկայացված գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը կքննարկվի հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը ավարտվելուց հետո:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 և 361 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Գոհար Գրիգորյան

Digitally signed by GRIGORYAN GOHAR 7611950401
Date: 2024.02.20 14:59:34 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am